

ՀԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՆՍՏԱՆԴՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
ԿՈՆՍՏԱՆԴՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ВНЕДРОСТА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИИ
Ленинградский Научный
Центр
СССР

ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐ

ԽՍՀՄ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

ԿՈՆՍՏԱՆԴՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
ՄԱՍԻՆ

ՍՈՎԵՏԱՆԻ ՄԱՍԻՆ
ՄԱՍԻՆ

ԶԱԿԿՆԻԳԱ 1 9 3 1

**ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ 6-ԲԴ ՀԱՄԱ-
ԳՈՒՄԱՐԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԱՌԱ-
ՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ**

ԽՍՀ Միության խորհուրդները վեցերորդ համա-
դամարը լսելով և քննելով ԽՍՀ Միության ժողովրդա-
կան կամիաարների Խորհրդի նախագահ Վ. Մ. Մու-
տովի (Սկրյաբինի) հաշվետվությունը ԽՍՀ Միության
կառավարության աշխատանքի մասին հինգերորդ հա-
մադումարից մինչև վեցերորդ համադումարը ժամա-
նակամիջոցի համար, լիովին համաձայնության և տալիս
կառավարության ներքին ու արտաքին քաղաքականու-
թյանը :

Խորհուրդները անցյալ համադումարի ժամանա-
կից մինչև հիմա տեղի չեն ունեցել խոշորագույն փո-
փոխություններ դատակարգային ույթերի հարաբերա-
կանության միջև ԽՍՀ Միության ներսում և միջադ-
րային դրություն մեջ :

Խորհրդային յերկրի ինդուստրացման ու կոլեկ-
տիզացման մեծագույն հաջողությունների հեռանա-
քով սոցիալիստական տեկտորը իշխող դիրք գրավեց
ժողովրդական տնտեսության մեջ : Հենց դրա-
նով այժմ, ՆԵՊ-ի վերջին շրջանի պայմաններում,
խորհուրդները յերկրի մասնաբաժին սոցիալիզմի ուղ-
ղակի կառուցման ժամանակաշրջանը : Հակառակ իհա-
միների «մարդարևյութանք» և չույսած նրանց կող-
մից խորհրդային իշխանության դեմ շարունակվող
կառույթի պայքարի փորձերին, հակառակ ուղարու-
նիստների կասկածներին ու մանր բուրժուական անհա-
վատություններ, — մեր յերկրում միայն և սոցիալիզմի
հաղթանակի հարցը, և սոցիալիզմի հաղթանակը ԽՍՀ
Միության մեջ լիովին ապահովված և :

Տպ. Ա. Յ. Մյանսկիյանի անվան, հրատարակչ. «Զորյա Վոստոկ»-ի

Գառվեր 997

Դրավեր 606

Տիրած 5000

ԽՍՀ Միութեան սոցիալիստական ինդուստրիայի ու գյուղատնտեսութեան հսկայական աճը գուղադեպում է արդյունաբերական և ագրարային սոսկալի ճգնաժամին կապիտալիստական յերկրներում: Ծղնաժամի ընդլայնումն ու խորացումը արտաքին և իմպերիալիստական տնտեսի բոլոր հակասութիւնները: Այս հակասութիւնների աճման հետեւանքով, խորհրդային Միութեան կապիտալիստական աշխատեման վրա մեր թշնամիների զբաժ հույսերի խորտակման պատճառով, ուժեղանում է միջազգային իմպերիալիզմի ագրեսիվ քաղաքականութիւնը պրոլետարական դիկտատուրայի յերկրի դեմ, վորն արտահայտւում է վերջին ժամանակներս մի ամբողջ շարք հակախորհրդային ամբաստանիչ կամպանիաների մեջ, ինչպես որինակ՝ «խառնակերպ արշալանքը», «խորհրդային դեմպիւնգի» մասին տարածմամբ կեղծավոր ստի մեջ, խորհրդային Միութեան տերրիտորիայում «ստիպողական աշխատանքի» մասին հերյուրած ամբաստանութեան մեջ և դրա հետ միասին ԽՍՀ Միութիւնը ֆինանսա-տնտեսական տեսակետից չըջտիակելու փորձերն ուժեղացնելու մեջ: Այս բոլոր փաստերն ապացույց են, վոր իմպերիալիստական ուշիշերը պատրաստութիւն են տեսնում խորհրդային Միութեան դեմ գինւամբ ուղղակի ինտերվենցիայի:


Համագումարը խորհրդային կառավարութեան ամենախոշոր արժանիքն է համարում այն, վոր, չնայելով ոտարյերկրյա իմպերիալիստական թշնամի ուշիշերի ուղղակի պրոպոկացիային, ինչպես որինակ՝ հարձակումը Չին-Արեւելյան յերկաթուղու վրա, խորհրդային իշխանութեան ջանքերով այս դժվարին պայմաններում հաջողւեց ապահովել խաղաղութեան պահպանումը և ամրացնել խորհրդային Միութեան միջազգային դրութիւնը:

Համագումարը հանձնարարում է կառավարութեանը, հենկելով խորհրդային յերկրի տրեցոր աճող հզորութեան և դեպի իմպերիալիզմը բոլոր յերկրների

աշխատավորների տաճած համակրանքի աճման վրա, ամրապնդել տնտեսական կապերն ու փոխադարձութիւնները մյուս պետութիւնների հետ, միաժամանակ ամեն կերպ ամրացնելով նաեւ խորհրդային յերկրի պաշտպանունակութիւնը և հարմիր բանակի հզորութիւնը: Համագումարը պարզ հաշիվ է տալիս յերկին հետզհետեւ աճող ռազմական վտանգին մասին և դրա հետ միասին խտտւում է, թե կապիտալիստական յերկրներում խորացող ճգնաժամի ու աճող անկայունութեան պայմաններում, յերբ, դրան զուգընթաց, ամբաստնելում է ԽՍՀ Միութեան տնտեսական և քաղաքական հզորութիւնը, գինւամբ հարձակումը խորհրդային Միութեան վրա այժմ հանդիսանում է գլխաւոր վտանգ հենց նրանց համար, ուղքեր կհանդգնեն խախտել խաղաղութիւնը և հարձակել խորհրդային Միութեան վրա:

Համագումարը պարտաւորեցնում է ԽՍՀ Միութեան կառավարութեանը՝ ձեռք առնել խիստ միջոցներ՝ սահմանափակելու ներքուծումն այն յերկրներէ, վորոնք փոխանակ իրապես ամրացնելու տնտեսական հարաբերութիւնները խորհրդային Միութեան հետ, անց են կացնում խորհրդային արտահանութիւնը վիժեցնելու միջոցառումներ, թաղնելով «ստիպողական աշխատանքի» մասին տարածմամբ կեղծ սոսապիւնների տակ:

Համագումարը գոհունակութեամբ նշում է հաշիվատու չըջանում հնդալի պլանի կատարումը և գերակատարումը: Հսկայական հաջողութիւնները գյուղատնտեսութեան սոցիալիստական ռեկոնստրուկցիայի դործում, 7- ժամյա բանւորական որիա հաջող իրադործումը, դործադրութեան լիկլիկացիան, պրոլետարական մաստաների և գյուղի աշխատավորական մաստաների նյութական բարեկեցութեան անշիղ բարեալումը, խորհրդային հանրապետութեան ձեռք բերած սոցիալիստական շինարարութեան տեսլիքը, յերբ հարկաւոր չափով ու ե՛լ ավելի կազմակերպմամբ



60094.66

են մասաները և ակտիվութիւն և մտել խորհրդային իշխանութեան բոլոր որդանների աշխատանքի մեջ, — սպահովում են հնդամակը իրագործելու լիովին հնարավորութիւնը չորս տարում, իսկ արդյունաբերական հիմնական և վճարական ճյուղերում — յերեք տարում:

Համագումարը նշում է, վոր այս հաջողութիւնները ձեռք են բերւած դատակարգային պայքարի սրաման պարագայում, ամբողջ ֆրոնտով ծախարկած սոցիալիստական արշավի հիման վրա, կուլակային — կարգար հաղթահարելու հիման վրա, տնտեսութեան ու պետական տարրերի գլխավորութեան անողորմական պարտի մեջ յեղած միասարար և բյուրոկրատիկ վորջիւր վոչնչացնելու հիման վրա, պետապարտը սխառնմարտը բարեկարգելու հիման վրա, արդյունաբերութեան ու առևտրի միջից մատնելու կապիտալիզմի վորջիւր վոչնչացնելու հիման վրա, գյուղի համատարած կապիւր, վոչնչացնելու քաղաքականութեան իրագործման հիման վրա:

Մեր տնտեսութեան հետագա սոցիալիստական ունկնդրութեան, դատակարգային թշնամու դեմ տաճերը, մեր հետամնացութեան ու անկուշտութեան վորջիւր վերացման շահերը, դժվարութիւնները, վորթանք դանդաղացումը ու աշխատավոր մասսաների դրութեան բարելաւումը, ինչ Միութեան պետական անկախութեան ու հետագա զարգացումն սպահովելու շահերը պահանջում են անպայման ապահովելու դուրսդրումն և կոլլեկտիւացիան աշխատանքի, վոր վերցրել է խորհրդային իշխանութիւնը: Տեմպերի հարցը վճարական նշանակութիւն ունի ներկա շրջանի համար: Խորհրդային իշխանութեան անցկացրած տեմպերի դեմ միջոց պայքարը հանդիսանում է ուղիղ-

նիղմի — մեր դատակարգային թշնամու գործակալութեան ամենաբնորոշ գիծը:

Ընթացիկ տարւա պրոմֆիկայլանի իրագործումը, առաջին հերթին՝ արդյունաբերութեան գլխավոր ճյուղերում (մետաղ, քարածուխ), ինչպես նաև տրանսպորտում, վորը դարձել է ժողովրդական տնտեսութեան ամենանեղ տեղը և վորը պետք է, ինչպես ել լինի, հաղթահարել ամենակարճ ժամանակամիջոցում, արդյունաբերութեան գլխաց գլխած վորակային առաջադրանքի իրագործումը և ամենից առաջ՝ արտադրանքի ինքնարժեքի իջեցումն ու ամբողջ ֆիկայլանի անդալման իրագործումը և ֆիկանսական դիսցիպլինի հաստատ անցկացումը, հսկայական նշանակութիւն ունեն մեր յերկրի սոցիալիստական վերակոխութեան ամբողջ գործի համար:

Ընթացիկ տարւա ֆիկայլանի իրագործելու համար անհրաժեշտ է՝ ամեն կերպ լարել բանւոր դատակարգի ույժերը, աշխատել ել՝ ամբողջ դարգացնել հարմարութեան ու սոցիալիստութեանը և նրանց հասցնել ամբողջ բարձր աստիճանի, անհրաժեշտ է բարձրացնել աշխատանքի արտադրողականութիւնը, ամրացնել աշխատանքային դիսցիպլինան, լարել չափերով դարգացնել մեքենայացումը, ստեղծել վորակային բանւորական ուժի ու մասնագետների կազմեր, անհրաժեշտ է տիրապետել տեխնիկային, վորը բանալի յե հանդիսանում մեր սոցիալիստական ինդուստրիայի զարգացման հիմնական ինդիկները լուծման համար ներկա ետապում: Խորհրդային արդյունաբերութեան զարգացման մեր ձեռք բերած մակարդակը հզոր նախադրային է ըստեղծում գյուղատնտեսութեան մեքենայացման ու տրանսպորտացման համար, սովիտոյների և մեքենա-տրակտորային կայանների հսկայական ամժի համար, կոլլեկտիւրում մեքենա-տրակտորային բազան զգալի չափով ուժեղացնելու համար, հետևապես նաև չքավոր միջակ տնտեսութիւնների կոլլեկտիւացիան պրոցեսն ամրացնելու համար՝ բանւոր դատակարգի դեկալատութեամբ:

Համագումարը համաձայնությամբ և տարիս կառավարության վորդմանը՝ ոկրուզները վերացնելու և չբռնան ամբողջներու մասին, վերջինս համարելով վորդեալն ոկուզի սոցիալիստական ոկոնստրուկցիայի հետ կապված աշխատանքի հիմնական ողակ:

ԽՍՀ Միութեան տերրիտորիայում դուրացիական մասի և կոլխոզների մեջ: Կոլխոզական դուրացիական ու իրական հզոր հենակը դուրդում: Կոլխոզական վեց կոլեկտիվ տնտեսության առաջնությունը անհատական տնտեսությունների հանդեպ: Այդ հոդի վերա առում և լայնանում և ներհասանքը կոլխոզների մեջ: Ստեղծվում են բոլոր անհրաժեշտ նախադրյալներն այն բանի համար, վորպեսզի ընթացիկ տարում Խորհրդային Միության մեջ դուրացիական բոլոր տնտեսությունների 50 տոկոսն ընդգրկեն կոլխոզները: Կոլխոզների հետագա աճի ու ամրացման, նրանց մեջ ջարդորմիչան տնտեսությունների մեծամասնությունը ներգրավելու, հացահատիկային, սպաս նաև անասնաբուծական պրոդուկտի բուծման ամենամեծ աշխատանքի ճիշտ կազմակերպությունը և դործնականապես յեկամուտների բաշխման իրադրոծումը՝ ըստ կոլխոզների թափած աշխատանքի, ըստ նրանց աշխատանքի վորակի ու քանակի:

Սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառներում մեր յերկրի առաջ կանդան հակալական խնդիրները պահանջում են՝ վերադասավորել, վերաբողջ աշխատանքը, պահանջում են նրանցից՝ դեմքով դասնալ դեպի սոցիալիստական շինարարությունը, վճռականապես հաղթահարել ու պորտուներելը և բուլեիկյան տեմպերից յետ մնալը Խորհրդային բոլոր աշխատանքներում՝ վերից վար, պահանջում են, կազմակերպել ընդունված վորդումների փաստացի իրադրոծման խիստ ստուգում:

Համագումարը համաձայնությամբ և տարիս կառավարության վորդմանը՝ ոկրուզները վերացնելու և չբռնան ամբողջներու մասին, վերջինս համարելով վորդեալն ոկուզի սոցիալիստական ոկոնստրուկցիայի հետ կապված աշխատանքի հիմնական ողակ:

Համագումարը վիժվին ու ամբողջութեամբ համաձայնությամբ և տարիս կառավարության ձեռք առած միջոցառումներին՝ վերաշինելու կոոպերացիայի ու մատակարարման բոլոր ողակների աշխատանքը՝ ըստ դասակարգային սկզբունքի յն մատակարարման ամբողջ սխեմայի սոցիալիստական շինարարության ու պրոմիշինային իրադրոծման շահերին յեկնարկելու տեսանկյունով: Համագումարն անհրաժեշտ և համարում՝ շուտափուլ կերպով բարելավել կոոպերացիայի ամբողջ աշխատանքը, ուժեղացնել պաշարը կոոպերատիվ ապարատի բյուրոկրատացման և Խորհրդային կոոպերատիվ առևտրի արժեքը լիբերալիստական դեմ, վորպիսի հանգամանքը պետք մ դառնա Խորհրդային յերկրի ինդուստրացման ու կոլեկտիվացման տեմպերն ապահովելու և արագացնելու հզոր լծակ:

Խորհուրդների վեցերորդ համագումարը վարժում և, վոր ներկա տարին հանդիսանում և վճռական տարի հնգամյակի ամբողջ պլանն իրադրոծելու խնդրում, վոր ներկա տարին հանդիսանում և ԽՍՀ Միութեան սոցիալիստական եկոնոմիկայի հիմնադրությունն աշխատելու տարի:

ԽՍՀ Միութեան Խորհուրդների վեցերորդ համագումարը Խորհրդային Միութեան բանվոր դասակարգի ու բոլոր աշխատավորների առաջ դնում և հետևյալ բողուզներ. վոչ ավելի, քան ներկա տեսնամյակի ընթացքում, տեխնիկական-տնտեսական տեսանկետից հասնել և անցնել առաջագիմ կապիտալիստական յերկրներից:

ԽՍՀ Միութեան Խորհուրդների վեցերորդ համագումարի նախագահ՝ Մ. ԿԱՆԻՆԻՆ:

ԽՍՀ Միութեան Խորհուրդների վեցերորդ համագումարի քարտուղար՝ Ա. ՅԵՆՈՒԿԻՆԵ
Մոսկւա, 12 մարտի 1931 թ.

ԿՈՒՆՈՋԱԿԱՆ ԵՒՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Լսելով ու քննելով ԽՍՀ Միության Հոդվածներով ղեկավարվող և կոլխոզցիներին ու տրակտորացիներին համապատասխանող կոլխոզական շինարարության մասին, ԽՍՀ Միության խորհուրդների վեցերորդ համագումարը վարչապետ է.

I

Կոլխոզական շարժման արդյունքները և կոլխոզների առավելությունները անհատական անտեսությունների հանդեպ

Այնպես տարիների ընթացքում կոլխոզական շարժման վճռական արդյունքը կայանում է նրանում, վոր միլիոնավոր գյուղացիներ իրենց սեփական փորձով ստուգել և գնահատել են այն, վորպես միակ ուղի, վորն ազատում է նրանց կուլակային ստրկությունից և տանում է դեպի ապատ կոլխոզական կյանքը:

1. Տարեցտարի անընդհատ աճում է գյուղացիական այն անտեսությունների թիվը, վորոնք համախմբվում են կոլխոզների մեջ. 1928 թ. կոլխոզների մեջ համախմբվել է 400.000 անտեսություն, 1929 թ. — մեկ միլիոն, 1930 թ. — 6 միլիոն և առ 10 մարտի 1931 թ. — 9.400.000 կամ ԽՍՀ Միության չքավոր ու միջակ բուրր անտեսությունների 37 տոկոսը:

Առ 10 մարտի 1931 թվի կոլխոզների մեջ համախմբվել է՝

ա) հացահատիկային հիմնական շրջաններում (Հյուսիսային Կովկաս, Սարգիս, Վոլգա, Ուկրաինայի հարավարևելյան գոտի, Ղրիմ, Մեջին Վոլգայի Անդրփո-

դային գոտի) — 3.000.000 անտեսություն (չքավոր և միջակ բուրր անտեսությունների 74 տոկոսը):

բ) մնացած հացահատիկային շրջաններում — 3 միլիոն 800.000 անտեսություն (չքավոր ու միջակ բուրր անտեսությունների 40 տոկոսը):

գ) սպառող գոտում և աղյալին շրջաններում — 2.600.000 անտեսություն (չքավոր ու միջակ բուրր անտեսությունների 22 տոկոսը):

2. Կոլխոզների ցանքսի տարածությունը տարեց-տարի անընդհատ աճում է և վրավելի արագ, քան աճում է այն անտեսությունների թիվը, վորոնք համախմբված են կոլխոզների մեջ. 1928 թվին կոլխոզները ցանել են (գարնանն ու աշունը) յերկու միլիոն հեկտար, 1929 թվին — 6,5 միլիոն հեկտար, 1930 թվին — 43 միլիոն հեկտար:

Այդպիսի մեծ աճը բացատրվում է վրավելի արագ ներառումով, վոր աճում է կոլխոզների մեջ համախմբված անտեսությունների թիվը, այլև նրանով, վոր մի կոլխոզական ծխին ընկնում է շատ ավելի մեծ ցանքս, քան մի անհատական անտեսությունը:

1930 թվի գարնանը ԽՍՀ Միության մեջ մի ծխին ընկնող ցանքսը կազմում էր՝ անհատականներինը — 2,7 հեկտար, կոլխոզներինը — 5,2 հեկտար (համարյա յերկու անգամ ավելի շատ): Հացահատիկային հիմնական շրջաններում՝ անհատականներինը — 3,7 հեկտար, կոլխոզներինը — 7,7 հեկտար (շատ ավելի քան յերկու անգամ): մնացած հացահատիկային շրջաններում՝ անհատականներինը — 2,9 հեկտար, կոլխոզներինը — 4,6 հեկտար (մեկ ու կես անգամ ավելի շատ): սպառող գոտում և աղյալին շրջաններում՝ անհատականներինը — 2,2 հեկտար, կոլխոզներինը — 2,8 հեկտար յուրաքանչյուր ծխին (մեկ չորրորդ անգամ ավելի շատ):

3. Կոլխոզական ցանքսի այդպիսի գերազանցությունը անհատականներից բացատրվում է նախ և առաջ նրանով, վոր կոլխոզը միացյալ խոչոր անտեսություն է, վորը հնարավորություն ունի կիրառել և բավարարել

կերպով ոգտագործել տրակտորները, գյուղատնտեսա-
կան մեքենաները և այլն, մինչդեռ անհատական տրե-
սետուլթյունը մանր տնտեսուլթյուն և, զուրդ աղարկի
հնարավորուլթյունից: Մինչև անգամ ձին ավելի շատ
արդյունք և տարկա կոլխոգում, քան անհատականում:
Հայտնի յե, որինակ, վր 1930 թվին կոլխոգական տրե-
սետուլթյան մեջ ձին, չնայած ձերին ոգտագործելու
բոլոր թերուլթյուններին, մշակել և, այնուամենայնիվ,
մեկ ու կեսից—յերկու անգամ ավելի հողամաս, քան
չբավոր—միջակ անհատական տնտեսուլթյան մեջ:

Կոլխոգական ցանքսի գերազանցուլթյունը բացա-
տուլում և, բացի դեանից, նաև այն հանգամանքով, վր
կոլխոգները, վրայես խոչոր ու ընկերական տնտեսու-
լթյուններ, հնարավորուլթյուն ունեն արմատապես բա-
րելակիւս գործի աղբուտնիկական գրուլթը (մար-
վերի—միջնասահմաններ—ուլթնացում, համատա-
րած հողամասով ցանքս, ամբողջ ակրացվի դուում և
խամատում), մինչդեռ, անհատական տնտեսուլթյուն-
ները, վրայես կանոն, գրկված են այդ հնարավորու-
լթյունից:

Հենց այդ հանգամանքով պետք է բացատրել այն
փաստը, վր չնայած բերահավաքը կազմակերպելու
մեջ յեղած խոչոր թերուլթյուններին, նկատի ունենալով
գործի նորուլթյունը, այնուամենայնիվ՝ հացաբույսերի
բերքը կոլխոգներում 1930 թվին գերազանցեց անհա-
տական տնտեսուլթյան բերքին, միջին առամբ, ամե-
նապակասը 10—15 տոկոսով:

4. Այս ամենի հետևանքով աճեցին կոլխոգնիկների
բարեկեցուլթյունը և կոլխոգական տնտեսուլթյան աղ-
բանքայնուլթյունը:

ա) 1930 թվին գյուղատնտեսուլթյունից ստացված
յեկամուրը, վր հասել է կոլխոգական աղբաբնակու-
լթյան մի շնչին, մեկ ու կես անգամ ավելի շատ է յե-
ղել անհատական տնտեսուլթյան մի շնչին համող յե-
կամաից, ուրիշ խոցով՝ կոլխոգնիկի համար, այսինքն՝
նախկին չբավոր—անհատ տնտեսուլթյան համար, յե-

կամուտն ավելացել է վ'չ պակաս, քան յերկու ան-
գամ:

բ) 1930 թվին կոլխոգների կողմից պետուլթյանը
ծախած հացահատիկային մշակուլթների աղբանքա-
յին արտադրանքը (460 միլիոն փուլթ) յերեք ու կես ան-
գամ ավելի յե 1926—1927 թվին կուրակների արտա-
գյուղական աղբանքային հացամլթերների ըանակից
(126 միլիոն փուլթ) և 1,6 անգամ ավելի կարվածատի-
րական տնտեսուլթյան նախապատերազմական արտա-
դրանքից (280 միլիոն փուլթ):

գ) չնայած այն հանգամանքին, վր մի շարք կոլ-
խոգներում պետուլթյանը հացահատիկների հանձման
գործը դրված էր անբավարար հիմքերի վրա, այնուա-
մենայնիվ՝ 1930 թվին հացամլթերումների պլանը կոլ-
խոգները կատարեցին լիովին և վրոչված ժամկետին:

5. Շնորհիվ այն փաստի, վր միլիոնավոր գյու-
ղացիներ վրո դերին կոլլեկտիվացման ուղին, վրիվեց
մեր ամբողջ գյուղատնտեսուլթյան կերպարանը: Քիչ
արտագրող մանր ու յետամնաց անհատական գյուղա-
ցիական տնտեսուլթյան տեղը դրավում է միացյալ խո-
չոր կոլլեկտիվ տնտեսուլթյունը, վր ղինված և նոր
տնիկիկայով և տալիս է բարձր արտադրողականու-
լթյուն:

Այն փաստը, վր 75,000 կոլլեկտիվ խոչոր տնտե-
սուլթյուններ, կազմված վեց միլիոն չբավոր ու մի-
ջակ անհատական մանր գյուղացիական տնտեսուլթյուն
ների միացումից, ցանել են 1930 թվի դարնանը 32,8
միլիոն հեկտար, մինչդեռ, մնացած քան միլիոն ան-
հատական գյուղացիական տնտեսուլթյունները ցանել են
ընդամենը 52,8 միլիոն հեկտար: Դա նշանակում և, վր
85.000 կոլլեկտիվ տնտեսուլթյունների ընդունակ յեղան
ցանելու իրենց արտերում կեսից ավելին (62 տոկոս):
ամբողջ այն ցանքսի, վր կարողացան անել քան մի-
լիոն անհատական գյուղացիական տնտեսուլթյունները:

Մեր յերկիրը, մանր գյուղացիական տնտեսուլթյան
յերկիրը, մինչ աղբատուլթյան աստիճան՝ ըայտայում

կալվածատերերի և կուլակների ձեռքով, դառնում է աշխարհիս տմենախոշոր, ամենաառաջավոր դյուղատնտեսության յերկիր:

6. Այդ և լենինյան կուսակցության քաղաքականության իրադրոժման հիմնական հետևանքը:

Ենթահիվ այդ քաղաքականության, մենք դուրս յեկանք հացահատիկային տնտեսության ճգնաժամից:

Այս քաղաքականության դրոժնական անցկացման հետևանքով միլիոնավոր այն դյուղացիք, վորոնք 1930 թվին կուլակտիվորեն վատարեցին դարնանացանն ու աշնանացանը, վո՛չ զբքերից ու տեսական դատողությաննից, այլ իրենց սեփական որինակով համոզվեցին լենինի ցուցմունքների ճշտության մեջ այն մասին, թե

«Մանր տնտեսությունը չի կարելի ազատվել վարկերից»: (Լենին):

«Յեթե մենք կշարունակենք նստել, առաջիկա պէս, մանր տնտեսություններում, թեև վորպես ազատ քաղաքացիներ ազատ հողում, միևնույն և, մեզ կորուստ է սպառնում»: (Լենին):

«Ընդհանուր, արտելային քնկերական աշխատանքի ոգնությունը միայն կարելի յե դուրս գալ այն փակուղուց, ուր մեզ քչեց, մացրեց իսկերիախատական պատերազմը»: (Լենին):

«Աշխատանքի արտադրողականությունը կբարձրանար յերկու-յերեք անգամ, մարդկային աշխատանքը յերկու-յերեք անգամ կենսայիվ հողագործության և դյուղատնտեսության համար, յեթե այդ բաժան-բաժան մանր տնտեսությունից կարելի յիներ անցնելու հասարակական տնտեսություն»: (Լենին):

II

Խորհրդային սխառքյան ոգնությունն այն գյուղացիների, վորոնք կոլտոգներ են կազմում

Գնալով լենինի հետքերով, խորհրդային իշխանությունը ցույց է տալիս կոլտոգներին տարեցտարի

ավելի ընդարձակվող ոգնություն: Խորհրդային իշխանությունը ոգնություն է ցույց տալիս կոլտոգներին այն պատճառով, վորովհետև միայն այդպիսի ոգնությունն և հանդիսանում ոգնության միակ ու գործնական տեսակը, վոր հնարավորություն է տալիս ջբավորին և միջակին՝ դուրս գալու աղքատությունից ու քայքայումից և ընդմիջտ ազատվելու կուլակային ըստըրկությունից ու շահագործությունից:

1931 թվին ընթահիվ ԽՍՀ Միության ինդուստրացման պլանի աջող կատարման և հնգամյակի առաջին յերկու տարվա համար տրված առաջադրությունների գերակատարման, խորհրդային իշխանությունն զգալիորեն ուժեղացնում է ոգնությունը կոլտոգներին՝ 1930 թվի համեմատությամբ:

1. դյուղատնտեսության մեջ է ուղարկում 120.000 տրակտոր (փոխանակված առաջ ուժանոց տրակտորի) .

2) կադմակերպում է մեքենա-տրակտորային 1.040 նոր կայան (բացի յեղածներից) .

3) կրկնապատկում է դյուղատնտեսության ու կուլտոգների մատակարարումը դյուղատնտեսական մեքենաներով (768 միլիոն ռուբլու գումարով՝ անցյալ տարվա 400 միլիոն ռուբլու փոխարեն), մասնավորապես՝ առաջին անգամ դյուղատնտեսության մեջ է ուղարկում 7000 բեռնակիր ու մարդատար ավտոմոբիլ:

4) բաց է թողնում դյուղատնտեսությանը 24 միլիոն ցենտներ (145 միլիոն փութ) հողի պարարտանյութ և 40 միլիոն ռուբլու գանադան միջոցներ՝ մշատատուների դեմ պայքարելու համար:

5) բաց է թողնում կոլտոգներին 21 միլիոն ցենտներ (126 միլիոն փութ) լավացրած ու ագնիվ տեսակի սերմացունք:

6) բյուջեյով ու յերկարատև վարկով բաց է թողնում կոլտոգներին և մեքենա-տրակտորային կայաններին մեկ միլիարդ հիսուն միլիոն ռուբլի ու, բացի դրանից, ավանսի կարգով՝ 350 միլիոն ռուբլի այն ցանքատարներին, վորոնք պայմանագրում են իրենց դաշտավարության արտադրանքը:

Կոլխոզական հաղթական շարժումը վճռականորեն
փոխում է ույթերի հարաբերությունը ԽՍՀ Միության
մեջ:

Կոլխոզներ, բե՞ռ ամհատակաց տմտեսություններ

III

1. Համատարած կոլլեկտիվացման ծախսման հի-
ման վրա, խորհրդային իշխանությունն անցավ կուլա-
կուլթյանը, վերստին դասակարգի, վերջ տալու քաղա-
քականությունը և աշտոնությունը իրադրո՞ւմ է այդ
քաղաքականությունը մերձին տարվա ընթացքում:
Կոլխոզի մեջ մտած միջակը, կոլխոզներին—նախկին
չբավորի ու միջակի հետ միասին—դառնում է խոր-
հրդային իշխանության իրական և հաստատուն հե-
ռակը (նեցուկը) գյուղում:

Դրանով խոշոր չափով ամրապնդվում է բանվոր
դասակարգի միությունը գյուղացիության հետ, ընդ-
լայնվում է բանվորա-գյուղացիական իշխանության
հիմքը, վերի (իշխանության) համար այսուհետև կոլ-
խոզական գյուղացիությունը հանդիսանում է հիմնա-
կան ու գլխավոր նեցուկը գյուղում:

Ամբողջությամբ արդարանում են Լենինի խոսքերը.

«Այն դեպքում միայն, յերբ աշտոնի գործնա-
կանապես ցույց տալ գյուղացիներին հողի հասա-
րակական, կոլլեկտիվ, ընկերական, արտելային
մշակման առավելությունները, այն դեպքում
միայն, յերբ աշտոնի ողնիկ գյուղացուն ընկերական
արտելային տնտեսության միջոցով, բանվոր դա-
սակարգը կարող է, վերի ձեռքին է դնում պե-
տական իշխանությունը, իրապես ապացուցել գյու-
ղացուն իր իրավացի լինելը, կարող է իրապես իր
կողմը դրավել բազմաթիվ գյուղացիական մաս-
սան՝ հաստատուն և իսկական ձևով»: (Լենին):

2. Այժմ, յերբ չբավորների ու միջակների բազմա-
թիվությունը, համոզվելով կոլխոզների առավելու-
թյուններում, վրա դրեց կոլխոզական ուղին, իսկ կու-

լակուլթյանը—կոլխոզների հիմնական թշնամին— վե-
րադրում է, վերստին դասակարգ, —հարց է դրվում դեռ
կոլխոզի մեջ չմտած յուրաքանչյուր չբավոր ու միջակ
անհատ տնտեսավարի առաջ— կոլխոզի հե՞տ, թե՞ կոլ-
խոզի դեմ:

Չբավոր ու միջակ անհատ տնտեսավարը, վեր-
նդում է կուլակին՝ պայքարելու կոլխոզներին դեմ և
խախտելու կոլխոզական շինարարությունը, չի կարող
կոչվել բանվոր դասակարգի դաշնակիցը, մասնավոր-
նախ նեցուկը, —նա իրապես կուլակի դաշնակիցն է:

Միայն այն միջակ ու չբավոր անհատ տնտեսավա-
րը շարունակում է մնալ բանվոր դասակարգի դաշնա-
կիցը, ով բանվոր դասակարգի հետ միասին ողնում է՝
կազմել կոլխոզներ, ով աջակցում, պաշտպանում է
կոլխոզական շարժումը, ով ողնում է՝ վճռական պայ-
քար մղելու կուլակի դեմ:

Խորհրդային իշխանության իրական ու ամուր
նեցուկը դառնալու համար, չբավոր և միջակ անհատ
տնտեսավարի առաջ կա մի ուղի—կոլխոզներին ողնու-
թյուն ցույց տալու ուղին, ապա կոլխոզների մեջ մասնե-
լու ուղին:

Խորհուրդների համադրմամբը լիտույա է, վեր
կոլխոզների մասնաշաղկապ փորձը առհասարակ ժամա-
նակում կհամոզի չբավոր ու միջակ անհատ տնտեսա-
վարներին կոլխոզները մտնելու շահախնդրության մեջ
և նրանք կկանգնեն կոլխոզական դրոշի տակ:

ԽՍՀ Միության խորհուրդների վեցերորդ համա-
գումարը պարտավորեցնում է կոլխոզական շարժման
աշխատավորներին և խորհրդային իշխանության բոլոր
կազմակերպություններին՝ համբերաբարությունը ու
համառաջար բացատրական աշխատանք տանել անհատ
տնտեսավարների մեջ, վերստին համոզել գյուղա-
ցիական մասնաշաղկապներին՝ դուրս դալ կոլլեկտիվացման
ուղին:

Կոլլեկտիվացման ընթացքը վերջին շաբաթներում
(հունվար, փետրվար ամիսների և մարտի առաջին



տանտրյակի (դեկադի) ընթացքում կոլխոզները մեջ են
մտել 2,8 միլիոն գյուղացիական տնտեսությունները)
ցույց են տալիս, վոր միլիոնավոր գյուղացիական նոր
տնտեսություններ արդեն վճռել են իրենց առաջադրված
հարցը՝ ո՞ւմ հետ գնալ—բանավոր դասակարգել ու կոլ-
խոզական տնտեսություններ կազմակերպել հետ—կոլխոզների դեմ:

IV

Ամենագլխավոր քերությունները կոլխոզների աշխա-
տանքի մեջ

1930 թվին կոլխոզները մեջ մտած գյուղացիական
միլիոնավոր տնտեսություններ կարողացան 1930 թվի
դարնանը կոլխոզական առաջին ցանքսի ժամանակ բա-
վական բարձրացնել աշխատանքի արտադրողականու-
թյունը և մեքենաների ու գործիքների ոգտագործումը,
անհատական տնտեսությունների համեմատությամբ:
Սակայն, ամբողջապես չողտագործվեցին աշխատանքի
արտադրողականությունը բարձրացնելու այն հնարա-
վորությունները, վորոնք հատուկ են խոշոր կոլեկտիվ
տնտեսությունները, կոլխոզների աշխատանքի մեջ յեղած
մի շարք լուրջ թերությունների պատճառով:

1930 թվին կոլխոզների աշխատանքի մեջ յեղած
ամենադժվարը և ամենապահանջ թերություններն
էին, նախ՝ այն, վոր կոլխոզական յեկամուտը բաշխ-
վել էր վրձ ըստ կոլխոզիկի աշխատանքի քանակի ու
վորակի, յերկրորդ՝ այն, վոր աշխատանքը կադմա-
կերպվել էր անչորհք և վատ, մանավանդ բերքը հա-
վաքելու գործում:

Յեկամուտը բաշխումն ըստ շնչերի, և վրձ թե ըստ
կոլխոզիկի աշխատանքի վորակի ու քանակի, տեղի յե
ունեցել մի շարք դեպքերում, մանավանդ Միջին Վոլ-
դում, և բոլոր դեպքերում խախտել է կոլխոզնե-
կոլեկտիվական շահագործվածությունը կոլխոզական ար-
տադրություն հետևանքների մեջ, խիստ էջեցրել և աշ-

խատանքի արտադրողականությունը, պակասեցրել և
կոլխոզիկների կողմից աշխատանքի դնելու որերի թի-
վը և վերջին հաշվով—ջնացրել է կոլխոզների յեկամու-
տը: Այդպիսի կոլխոզներում կոլխոզիկներից վա-
տանք, լավագույններն ու գիտակիցները, ընդհանուր
գործին արտանց նախաձեռնները, աշխատել են արելու
թործին, իսկ մյուսները խուսափել են աշխատանքից և ող-
բագործել են կոլխոզը, վորպես ուրիշի աշխատանքի
հաշվին շահվելու միջոց, ձգտել են ընդհանուր աշխա-
տանքից գոյել իրենց համար ավելի բան, աշխատելով
ավելի քիչ: Յեկամուտների բաշխումը (վրամով և բը-
նաքերով) վրձ ըստ կոլխոզիկի թափած աշխատանքի
քանակի ու վորակի, այլ ըստ շնչերի, հաճախ քարոզ-
վել է կոլխոզների և կոլխոզների այլ թշնամիների կող-
մից, վորոնք գործում են վիժեցնել կոլխոզական գոր-
ծը: Ուրիշի աշխատանքի հաշվին շահվելու սիրահար-
ներին անհրաժեշտ է տալ վճռական հակահարված,
կանգ չառնելով նույնիսկ կոլխոզներից նրանց դուրս
ձգելու հանդեպ:

Կոլխոզական յեկամուտների բաշխումն ըստ հե-
տեյակ սկզբունքի—ով ավելի շատ ու ավելի լավ է
աշխատում, նա ավելի շատ է ստանում, ով չի աշխա-
տում, նա վրձնչ չի ստանում,—պետք է կանոն դառ-
նա բոլոր կոլխոզիկների և կոլխոզների համար: Այդ
սկզբունքի համեմատ, դյուրանտեսական հիմնական
աշխատանքներում, հերկի, ցանքսի, քաղհանի, բեր-
քահավաքի, կալ անելու մեջ պետք է մասնաշաղկապ
կառնում ատանա ըստ գործի աշխատանքը, վոր գնա-
հատվելու յե աշխատանքային որերի նորմայով: Այս
հիման վրա միայն կարող է ուժեղանալ աշխատանքի
գիտելիքներն և լավ կադմակերպված աշխատանքը կոլ-
խոզներում: Այդպիսով, կոլխոզներում աշխատանքի
ճիշտ կադմակերպությունը դառնում է այն խնդիրը,
վորի աջող լուծումից է կախված կոլխոզի յեկամուտը
և նրա հետագա ամրացումը: Կոլխոզներին ցույց տրե-
վելիք ոգնությունը՝ աշխատանքները ճիշտ կադմակեր-

վոր տեղակիցների, ըստ դրոշմի սկզբունքի կիրառումը և յեկամուսները կատարած աշխատանքի համեմատ բաշխելու տեսակետից սահմանումը հանդիսանում են հողային ու կոլխոզական որդանների ամենակարևոր խնդիրը:

2. Կոլխոզների աշխատանքի մեջ նկատված մյուս չափաքանց կարևոր թերությունն էր բերքահավաքի վատ կազմակերպությունը (մանավանդ բամբակի, կը-տափառի, խնձի շարք շրջաններում՝ հացաբույսերի բերքի հավաքը), վորի հետևանքով, մի շարք դեպքե-րում վոչնչացավ կոլխոզական բերքի վորոշ մասը և բամբակի, կտափառի ու ալյ մշակույթների քանակը: Բեր-քահավաքի մաստ կազմակերպությունը խոշոր մնաս է հասցնում՝ թե՛ կոլխոզիկներին, քչացնելով նրանց յե-կամուսը, և թե՛ պետությունը, վորովհետև դրա հետե-վանքը լինում է այն, վոր առանձին կոլխոզներ չեն կատարում իրենց պարտավորությունները և պետու-թյանը և արտադրանք վոր նախատեսված է կոնտ-սեկտ է 1931 թվին իրապես բարելավել՝ ինչպես բո-կույթների բերքահավաքի ամբողջ գործը: Այդ պատ-միառին մանրակրկիտ ձևով ու խնամքով պարտադրել բերքահավաքի կամպանիայի համար, վորակողի հնա-րավոր լինի ապահովել աշխատանքի ճիշտ կազմակեր-պելը և ալը հիման վրա քչացնել կորուստները բերքա-հավաքի միջոցին ու ավելացնել կոլխոզների ապրան-քային արտադրանքը:

V

Կոլխոզական շինարարության խնդիրները
ԽՍՀ Միություն կողմից խնդուատրիայի դարգաց-ման հնգամյա պլանի աշող կատարումը, խնդուատրիայի,

վոր նյութական բազա յե ստեղծում կոլլեկտիվացման ծավալման համար, 1930 թվին և 1931 թվի սկզբին կոլխոզարժման հսկայական տեմպերի իրագործումը 1930 թվին կոլխոզական նոր կադրեր ստեղծելու գոր-ծում շտեմնիմադ արագությունը (բանվոր դասակարգը 25.000 քաղաքային բանվորներ և ուղարկել նոր վոր-խոզներին ողնելու համար, իսկ 1931 թվին հին կոլխոզ-ներն իրենց հերթին 20.000 կոլխոզիկներ կազմակեր-պիչներ են ուղարկում՝ ողնելու նոր կոլխոզներին) ցույց են տալիս, վոր ԽՍՀ Միություն կոլլեկտիվացման խնդիրը կարող է և պետք է վճուլի հնգամյակի վեր-ջում:

Ցեխակետ ընդունելով վերևում սաածները, ԽՍՀ Միություն խորհուրդների վեցերորդ համագումարը վորոշում է.

1. Խորհուրդները և խորհրդային որդանները պետք է յեխակետ դարձնեն իրենց աշխատանքներում՝ ինչպես արդյունաբերության դարգացման բնագավառում, նույնպես նաև քաղաքական ու գործնական աշխատանք-ների ապարեկում դրույում այն հանգամանքը, վոր հնգամյակի վերջում ԽՍՀ Միություն կոլլեկտիվացումը պետք է հիմնականում ավարտված լինի:

2. Մեքենա-տրակտորային կաշաններ լայն շինա-բարություն առաջին տարվա հետևանքները ցույց տը-վին, վոր մեքենա-տրակտորային կաշանները դնելով կոլխոզների տակ աշխարհիս ամենաառաջավոր հողա-գործության տեխնիկայի բազան, հանդիսանում են ա-մենակարևոր հնամեծերը համատարած կորեկտիվաց-ման և կուլակուլյանը, վորպես դասակարգի վերջ տա-լու համար:

Ամբողջությամբ ու լիովին համաունթյուն տարով կառավարություն տահմանած պլանին մեքենա-տրակ-տորային կաշանների շինարարություն համար 1931 թ. (մեքենա-տրակտորային կաշանների թվիը հասցրվում է 1.400 միավորի՝ մեկ միլիոն ձիու ույթ ունեցող տը-րակտորային պարկով) և նշելով, թե դրանով հենց

մեքենա-տրակտորային կայանների շինարարության հողամյա պլանի առաջադրությունը, սահմանված խորհուրդների հիմնվերովը համապատասխան կողմից, գերադասարժեքով և ունենալով անհրաժեշտ ֆինանսական համապատասխան սահմանում և, վերջինս մեքենա-տրակտորային կայանների դարգացման նոր խնդիր, հողամյակի վերջում (1933 թվին) ընդգրկել մեքենա-տրակտորային կայաններով կոլխոզական ցանքների 70—80 միլիոն հեկտարը, միացնելով տրակտորների նաև կենդանի քարշույթը:

Դրան զուգընթաց՝ համապատասխան նախադրումներով և ինքնուրույն ձևով քարշույթի արժեքը թերադանահատելուց: ՍՍՀ Միության կարիքները բավարարելու համար հացամթերքների, հումուսի և կերի մշակութային անհրաժեշտ քանակը կարող և արտադրվել միայն այն դեպքում, յեթե տրակտորի հետ միասին ամբողջությամբ կազանայնվի ձիու քարշույթը, ինչպես դաշտերի մշակման, նույնպես նաև բույսերի փոխադրանքի համար, և կոդատագործվի ավելի լավ, քան անհատական տնտեսություններում: Զիու քարշույթի վատնումը խորհուրդների համապատասխան համարում և կուլտիային աղբեցություն արտահայտություն և առաջարկում և խորհրդային իշխանության բոլոր որդաններին՝ ամենամեծ ունեցող և պարզ մղել այդ յերևույթի դեմ:

3. Կոլխոզացիների հիմնական ձևը դարգացման ամյալ շրջանում հանդիսանում և գյուղատնտեսական արտերը: Արտելում, վորտեղ պետք և լինի իր արտադրական պլանն ու արտադրական խիստ հաշվառք, գյուղացիները հետզհետե վարժվում և պլանային հատարանովոր գյուղացիներին համար արտերը հանդիսանում և դորձի կոլեկտիվ, ընկերական վարժան և հասարակական աշխատանքի հետևանքների հաշվառման հիմնական դպրոց, հասարակական նոր դիպցիպլինայի դրա-

րոց, գյուղում սոցիալիստական շինարարության ու մրցության դպրոց:

Մասսայական անցումը դեպի կոմունա, կարող և տեղի ունենալ միայն այն բանից հետո, յերբ գյուղացիությունը կանցնի կոլխոզների արտելային ձևի միջով, վորպես հասարակական տնտեսության դպրոցի միջով, յերբ կբարձրանա կոլխոզական տնտեսության տեխնիկական բազան, յերբ տեղի կունենա կոլխոզական կադրերի լուրջ աճ, պայմանով, վոր իրենք՝ գյուղացի-կոլխոզները կուղենան և անհրաժեշտ կհամարեն աղբիսի անցումը դեպի կոմունա, հիմնվելով իրենց կատարած փորձի վրա:

4. Հայանություն տալով այն կոլխոզներին նախաձեռնությունը, վորոնք ներկայումս ստեղծել են կոլխոզները կթի անասնի նախիր, բաղկացած 1,7 միլիոն գլուխ կովերից (այդ թվում՝ 4.700 ապրանքային կաթնատնտեսական ֆերմա՝ 450 հազար կովերով և 4.600 ապրանքային խոզաբուծական ֆերմա՝ 200.000 եգ խոզերով), խորհուրդների վեցերորդ համապատասխան առաջարկում և կառավարությունը՝ ամեն կերպ ընդարձակել այդպիսի կոլխոզներին ցույց արվելիք ֆինանսական ու կազմակերպչական ոգնությունը: Կոլխոզական անասնաբուծություն ստեղծելու յերևույթը՝ սովխոզական անասնաբուծություն կազմակերպելու հետ միասին՝ համապատասխան համարում և ամենակարճ ժամանակամիջոցում (1—2 տարում) անասնաբուծական պրոբեմը լուծելու հիմնական ուղի և համանություն և տալիս կառավարության վորդմանը՝ կոլխոզական կաթնատնտեսական կենտրոն ստեղծելու մասին, հատկացնելով նրան 1931 թվին յերկարատև վարկերի միջոցներից 115 միլիոն ռուբլի, և կոլխոզական խոզաբուծական կենտրոն հիմնելու մասին, հատկացնելով նրան 1931 թվին յերկարատև վարկերի միջոցներից 43 միլիոն ռուբլի:

5. Պետական ու կոոպերատիվ տնտեսական կազմակերպությունների հետ կոլխոզի տնտեսական փոխ-

հարաբերութիւններէ հիմնական ձեւերից մեկն է պայ-
մանադիրը կոնտրակտացիոյ մասին: Կոնտրակտա-
ցիոյ մասին մենք ալ պայմանադիրը հանդիսանում է
յերկկողմանի (յերկուստեք) պարտադիր, այսինքն՝
վո՛չ միայն պետութեան պարտադիր՝ Կոլխոզներն ող-
նութիւն ցույց տալու մասին, այլև Կոլխոզներն պար-
տադիր՝ իրենց պարանքային արտադրանքը պետութեան
նը հանձնելու մասին: Համապատասխան կոնտրակտացիա-
յի պայմանադիրը համարում է վորպես Կոլխոզի ար-
տադրական պլանի իրագործման անբաժանելի մաս և
առաջարկում է բոլոր Կոլխոզներին ու Կոլխոզնե-
րին՝ ապահովել կոնտրակտացիոն պայմանադրերի ժա-
մանակին և բարեխիղճ կատարումը:

6. Հատուկ ուշադրութիւն պետք է դարձնել Կոլ-
խոզական կադրերն ստեղծելու և պատրաստելու վրա,
ըստ այսմ, համապատասխան այս բնագաւառում հիմնա-
կան խնդիրն է համարում՝ ստեղծել Կոլխոզների արտա-
դրական ճյուղերի ղեկավարների փորձված կադրերը
(բրիգադիրներ, դաշտավարներ, ալիպա անասնաբույժ-
ներ, ալիպա տրակտորիստներ, հաշվարարներ), վորոնք
մասնագէտ են դառնում անտեսութեան համապատաս-
խան ճյուղերում: Այս կադրերն ստեղծելու համար
պետք է, ըստ հնարաւորին, լայն չափերով կիրառել
իրեն արդարացրած այն մեթոդը, վորի համաձայն,
ալիքի փորձված Կոլխոզներէն չին Կոլխոզներից մաս-
նաշահանորեն ուղարկում են ողնելու նոր Կոլխոզնե-
րին, և նոր Կոլխոզների կադրերը սովորում են լալա-
զուին հին Կոլխոզներում:

7. Կոլխոզներում աշխատանքի լալազուին կազմա-
կերպութեանը և հողի մշակման մեքենայացմանը դու-
զրնթացաբար պետք է ուժեղանա անտեսութեան այլ
ճյուղերում (արդյունաբերութեան, տրանսպորտ, շի-
նարարութեան) աշխատանքի դնելու սովորութեանը:
Հաշիւ առնելով բանուկի խոշոր պահարար արդյու-
նաբերութեան համար, վորը ծախարկում է արագ տեմ-
պով, ԽՍՀ Միութեան խորհուրդների վեցերորդ հա-

մադումարը պարտաւորեցնում է բոլոր Կոլխոզներին՝
վո՛չ միայն արգելք չհանդիսանալ բանավորների հոսան-
քին դեպի արդյունաբերութեանը, այլև նպաստել այդ
բանին:

VI

Առանց արդյունաբերութեան կգոր գարգացման անհնա-
րին է գյուղատնտեսութեան հետագա վերելքը

ԽՍՀ Միութեան ինդուստրացման մեջ ձեռք բերած
աջողութիւնների հիման վրա միայն հնարաւոր դար-
ձալ դյուղատնտեսութեան վերելքը: ԽՍՀ Միութեանը
գարգացնելով և ուժեղացնելով արդյունաբերութեանը,
հնգամյակի առաջին յերկու տարում գերակատարեց
արդ տարիների համար տրված առաջադրութիւնները
և դրանով հնարաւորութեան ստեղծեց՝ Կոլխոզների
տակ թաչել տեխնիկական հզոր բաղա: Այլապես, ա-
ռանց արդյունաբերութեան հզոր գարգացման, չթափոր
ու միջակ դյուղացիների անտեսութեան սպանում եր
թալքայում, փոտւմ՝ քիչ արտադրական մասն անտե-
սութեան մակարդակի վրա և Կուլակային ստրկութեան
ուժեղացում:

Համապատասխան շեշտում է ծանր արդյունաբերու-
թեան, անտնտեսական մետաղադուրծութեան, մեքենա-
շինութեան, տրակտորաշինութեան, ալտոշինութեան,
դյուղատնտեսականաշինութեան և ըմիայի գարգացման
նշանակութեանը դյուղատնտեսութեան, Կոլխոզների
ու հատկապես սովխոզների համար, և առաջարկում է
կառավարութեանը՝ հետադաշում ևս անշեղորեն անց-
կացնել ԽՍՀ Միութեան ինդուստրացման քաղաքակա-
նութեանը, աշխատելով հնգամյակին իրագործել չորս
տարում:

Հալաւութեան տալով կառավարութեան վորոշ-
մանը՝ ընթացիկ տարում 1-57 միլիոն ոտկու բերքա-
հալաք մեքենաներ արտադրելու և մասսայական մաս-
շտարով կտալատի սկզբնական մեխանիկական վերա-
մշակման կազմակերպութեան մասին, ԽՍՀ Միութեան

խորհուրդների համագումարն առանձնապես չեչտում է, թե անհրաժեշտ է, գյուղատնտեսական մեքենաների արտադրությունը դարգացումը ծավալելիս, յեղակետ ընդունել վո՛չ միայն հացաբույսերի մշակույթների մեքենայական բերքահավաքն ու մշակումը, այլև տեխնիկական ու կերի մշակույթների և հատկապես այն գործարքների մեքենայացումը, վորոնք մինչև այսօր պահանջում են խոշոր քանակությամբ մարդկային աշխատանքի կիրառում (միջլարքային մշակում, արմատապտուղների պեղում, կտավատի փետրում և այլն)։ անհրաժեշտ է նույնպես արտադրել նոր հողերի պատրաստության համար մեքենաներ (մեքենաներ իրրիգացիայի, մեխորացիայի, արմատախիլանքի, ճանապարհների շինարարության համար և այլն)։

* * *

ԽՍՀ Միության խորհուրդների վեցերորդ համագումարը դիմում է այն բոլոր չքավոր ու միջակ անհատ տնտեսավարներին, վորոնք դեռ չեն մտել կոլ-

կոլխոզների մեջ ուչ մտնելու ձեր յուրաքանչյուր օրը դանդաղեցնում է ձեր բարեկեցության աճը, զըրկում է ձեզ խոշոր արտելային տնտեսության բոլոր առավելություններից ոգտվելու հնարավորությունից։

ԽՍՀ Միության խորհուրդների վեցերորդ համագումարը դիմում է կոլխոզական ամբողջ գյուղացիությանը.

Ձեզ առաջադրված խնդիրն է՝ ընթացիկ տարվա դարնանը ցանել, ամենապակասը, հիսուն միլիոն հեկտար և դրանով ընդարձակել ձեր ցանքսի տարածությունը տասը միլիոն հեկտարով ու կոլխոզական ցանքսով բռնել մեր յերկրի յամբողջ աշնանացանի կեսից վո՛չ պակաս մասը։

1930 թվի դարնան մեր ցանքսի վործը ցույց է տալիս, վոր այդ խնդիրը դուք կարող եք լուծել ամբողջովին, յեթե կարողանաք ճիշտ և արտելի կանոնադրու-

թյան համեմատ ու լավագույն կոլխոզների փորձի հիման վրա, կազմակերպել կոլխոզնիկների աշխատանքը և կոլխոզի յեկամուտները բաշխել կոլխոզնիկների կատարած աշխատանքի քանակի և վորակի համեմատ։

ԽՍՀ Մ խորհուրդների վեցերորդ համագումարի
նախագահ՝ Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀ Մ խորհուրդների վեցերորդ համագումարի
քարտուղար՝ Ա. ՅԵՆՈՒԿԻՉԵ

Մոսկվա, 17 մարտի 1931 թ.

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ VI ՀԱՍԵ- ԳՈՒՄԱՐԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՍՈՎԻՈՋԱԿԱՆ ԾԻ- ՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հսկող ԽՍՀ Միութեան Հոգժողկոմի և Զերնոսրես-
տի ու կենդանաբուծական սովխոզական տրեստների
համադեկույցները սովխոզական շինարարութեան մա-
տին, ԽՍՀ Միութեան խորհուրդների վեցերորդ համա-
դումարը վերջում է.

I

Սովխոզական շինարարության արդյունգները

1. Սկսած 1928 թվից հացահատիկային սովխոզ-
ների զարգացումը մեր յերկրում առաջ է դնում անընդ-
հատ աճող տեմպերով. հացահատիկային բոլոր մշա-
կույթների ցանքսի տարածութիւնը սովխոզներում.
թե՛ հին, և թե՛ նոր, Խորհրդային միութեան Միութեան
մեջ 1928 թվին կազմում են 1,0 միլիոն հեկտար, 1929
թվին—1,5 միլիոն հեկտար, 1930 թվին—3,9 միլիոն
հեկտար:

Ի լրացումն հացահատիկային սովխոզների, վո-
րոնք այս յերեք տարեկա ընթացքում զարգացել են
բուսն տնտեսներով, միանում է, սկսած 1930 թվից, ա-
նասնաբուծական սովխոզների հզոր ցանցը, վորոնք
կազմակերպվում են հացահատիկային շինարարութեա-
նը ղեկավարող տեմպերով: 1930 թվին հիմնվում են՝
«Սկոպտովոդ»-ը, վորն ունի 140 սովխոզ, ըսան միլիոն
հեկտար հող և 1,2 միլիոն գլուխ անասուն. «Սվինո-
վոդ»-ը, վորն ունի 350 սովխոզ, 1,2 միլիոն հեկտար
հող և 218 հազար գլուխ անասուն. «Ուկրաինովոդ»-ը վորն
ունի 115 սովխոզ, 13 միլիոն հեկտար հող և 2,7 մի-

լիոն գլուխ անասուն. «Մասլոսերեստ»-ը, վորն ունի 52
սովխոզ, 1-3 միլիոն հեկտար հող և հիսուն հազար
գլուխ անասուն: Կազմվում և նաև հանրապետական
անասնաբուծական սովխոզների (միարուծական, թրո-
նաբուծական, կաթնասնտեսական) լայն ցանց: Վոր-
պես լրացում «Սոյուզսերեստ» սովխոզների արդեն
գոյություն ունեցող հզոր ցանցի, սկսված է տնտեսիկա-
կան մշակույթների սովխոզների ծախսումը. կառավա-
տի սովխոզների տրեստը, վորն ունի 56 սովխոզ, կառ-
վատի ու կանխի ութ հազար հեկտար ցանքս. բամբա-
կաբուծական սովխոզների տրեստը, վորն ունի 16 սով-
խոզ, 45 հազար հեկտար ջրովի բամբակի ցանքսի տա-
րածութիւնը:

Բոլոր սովխոզներն արդեն 1930 թվին հանձնել են
պետութեանը 200 միլիոն ռուբլուց ավելի դումարի ապ-
րանքային արտադրանք (այդ թվում՝ 72 միլիոն փութ
հացահատիկ, մեկ միլիոն փլից ավելի միա, 180 մի-
լիոն փութ ճակնդեղ, 670 հազար փութ բամբակ):

3. Սովխոզների շինարարութիւնը տեղի ունի կու-
լակների կողմից խորհրդային իշխանութեանը ամենա-
կատարելի դիմադրութիւն ցույց տալու պայմաններում:

Այդ դիմադրութեան արտացոլումը կուսակցութեան
մեջ յեղալ աջ ուղիւնիստների պայքարը կուսակցութեան
դիմադրութեան դեմ, կուլակի վրա արշավելու դեմ,
սովխոզների զարգացման դեմ: Աջ ուղիւնիստներն ա-
մեն կերպ վորձում են ին դանդաղեցնել սովխոզների
զարգացումը, արգելադրել և վիժեցնել բանվոր դասա-
կարգի, չքավորների ու միջակների արշավը կուլակի
դեմ:

Աջ ուղիւնիստական փառաբանումների դեմ կու-
սակցական կուսակցութեան անհաշտ պայքարի շը-
նորհով միայն աջողից պաշտպանել սովխոզների դոր-
ծը, կոտրել կուլակների դիմադրութիւնը և հող պատ-
րաստել՝ փերջ տալու կուլակութեանը՝ վորպես դասա-
կարգի:

Սովխոզների նշանակությունը գյուղացիության համար

Սովխոզներն առաջադեմ նոր տեխնիկայով, մարդկային պատմության մեջ չտեսնված խոշոր չափի տնտեսություններով («Ձերնտորենատ» սովխոզի մեջ մի տնտեսությունը գարիս և քսան հալարից մինչև հարյուր հալար հեկտար ցանքա, «Սկոդովոդ»-ի մեջ—հինգ հալարից մինչև յերեսուն հալար գլուխ, «Ուլցեվոդ»-ի մեջ—հինգ հալարից մինչև 150 հալար գլուխ, «Սվի-նովոդ»-ի մեջ—8 հալարից մինչև 1,5 հալար եղևոց), աշխատանքի կազմակերպության սոցիալիստական ձևերով ցույց են տալիս գյուղացիներին խոշոր տնտեսություն լինելու անհրաժեշտությունը և հանդիսանում են դեկադար աշխույժ, վոր հեղափոխության գյուղացիների շրջադարձը դեպի կոլեկտիվացման ուղին։

Այդպիսով, սովխոզները չեն հանդիսանում լուրջ գյուղատնտեսական միջոցների պետական ֆաբրիկաներ։ Նրանք հանդիսանում են՝

ա) անմիջական ոգնություն աղբյուր կոլխոզներին (1930 թվին միայն հացահատիկային սովխոզները հերկեցին կոլխոզիկներին, չքափոր ու միջակ անհատ տնտեսությունների համար ութ հարյուր հալար հեկտար, տափանեցին յոթ հարյուր հալար հեկտար, իսկ բոլոր սովխոզները միասին պատրաստեցին հարյուր հալարավոր աշխատավորներ կոլխոզների համար։

բ) խոշոր տնտեսության որինակ, վորի հիման վրա գյուղացին ստուգում է խոշոր հասարակական հողագործության անցնելու շահավետությունը, վոր՛չ միայն հացահատիկային մշակույթների բնագավառում, այլև անասնաբուծության ու տեխնիկական մշակույթների ասպարեզում։

գ) նոր տեխնիկայի դպրոց, տնկարան ամեն տեսակ կատարելագործությունների ու բարելավումների, վորոնք սովխոզներում փորձվելուց, ատուգվելուց հետո

ընդունվում են կոլխոզիկների լայն մասսայի կողմից։ Համադրումարը չեղում է սովխոզների նշանակությունը կոլեկտիվացման մեջ, վորչափով սովխոզների ու կոլխոզների միասնական զարգացումը, աճող սոցիալիստական ինքուստրիայի հիման վրա, ապահովում է հիմնականում գյուղատնտեսության կոլեկտիվացման ավարտումը ներկա հնգամյակում։

Համադրումարը միասնական նշում է սովխոզների ու կոլխոզների միջև յեղած հսկայական տարբերությունը կարգացման տվյալ ուստիճանում։ Սովխոզները հանդիսանում են պետական ձեռնարկներ, վորտեղ պետությունը կատարյալ տեր է, այդ տեսակետից վոչընչով չի տարբերվում արդյունաբերական տիպի սոցիալիստական վորեև ալլ ֆաբրիկայից։ Իսկ կոլխոզներն, ընդհակառակը, հանդիսանում են ձեռնարկներ, հիմնված գյուղացիների կողմից, վորոնք կամովին համալնացրել են իրենց արտադրության միջոցները և իրենց տնտեսությունը վարում են արտությունը պատկանող հողում։ Ըստ այսմ, կոլխոզների տեր են հանդիսանում է կոլխոզիկները, վորոնց ամեն տեսակ աջակցությունը, ցույց տալիս բանվոր-գյուղացիական պետությունը, հատկացնելով նրանց լավագույն հողամասերը, տալով խոշոր արտոնություններ և մեքենա-տրակտորային կայանների միջոցով ստեղծելով նրանց համար հզոր տեխնիկական թաղա։

Այդ պատճառով ամեն մի փորձ նույնացնել իրար հետ սովխոզներն ու կոլխոզները, ստեղծել շուտափույթ սովխոզական-կոլխոզական կոմբինատներ, կամ մանախանդ՝ յենթարկել կոլխոզները սովխոզներին, համադրումարը համարում է վորպես խորհրդային իշխանություն ժողաքականության ամենակոպտ խախտում։

Սովխոզների տնտեսությունը կոլխոզներին, սովխոզների ու կոլխոզների փոխադարձ ոգնությունը պայմանագրերը վոր կիրառվում է շատ շրջաններում, ընդհա-

նուր վոչինչ չտեսնելու կոլխոզները սովխոզներին յենթարկ
կելու հակադեմոկրատիկ հետ փոխողներին ցույց
տրվող այդ ողնությունը, վոր կերպում է փոխա-
դարձ ողնության մասին կնքած պայմանագրերի հի-
ման վրա, պետք է հետագայում ասելի լսյն չափերի
հասնի վո՛չ միայն հացահատիկային սովխոզներում,
այլև անասնաբուծական սովխոզներում, վորոնց նախ-
րի զարգացումը բացում է կոլխոզական անասնի տե-
սակների արագ զարգացման խոշոր հնարավորություն-
ները հեռանկար:

III.

Ամենագլխավոր բերությունները սովխոզների աշխա-
տանքներում

Համազումարը հրավիրում է բոլոր մշակողներ-
ին և մանավանդ սովխոզների բոլոր աշխատա-
վորների ուշադրությունը սովխոզների աշխատանքների
մեջ յեղած մի շարք խոշոր թերությունների վրա:

Հացահատիկային սովխոզներում ամենագլխավոր
թերությունն,—ստանձնապես աթուղյատելի ափս
տնտեսություններում, վորոնց մատակարարում են
արտադրության լավագույն միջոցները,—հանդիսա-
նում է բերքի վո՛չ իր ժամանակին և վատ հավաքը,
մեքենաների վատ ոգտադրվելու հետևանքով, վորի
պատճառով մի քանի սովխոզներում փչացավ բավական
քանակությամբ հացահատիկ և չիրադրվեց պետու-
թյանը ապրանքային արտադրանք հանձնելու արտա-
դրական ծրագիրը:

Անասնաբուծական սովխոզների ամենագլխավոր
թերությունը հանդիսանում է անասունների վատ խը-
նամքը, անասնաբուծական միանգամայն անբավարար
սպասարկումը, կերի վո՛չ խոհական կերպով ոգտա-
դրվումը, վորի հետևանքով մի քանի սովխոզներում
կոտորվեց մատուղ առանձի գլուխ մասը և խափանվե-
ցին արտադրական առաջադրությունները:

Այդ չափով ևս անհանդուրժելի չէ համարում հա-
մադումարը սովխոզների և մեքենա-արակտորային
կախանների աշխատավորների կողմից արակտորներին
ու դյուղատնտեսական մեքենաներին ցույց տված հան-
ցավոր-անպիտան վերաբերմունքի բազմաթիվ փա-
տեղը:

Իրան համապատասխան, ԽՍՀ Միության խոր-
հուրդների վեցերորդ համագումարն առաջադրում է
սովխոզների ծավալման հետագա աշխատանքի կենտ-
րոնում դնել, սովխոզների վորակական ծավալման
խնդիրներին դուզելնեց (ցանքսի տարածության և
անասնի նախքի քանակի աճը՝ պլաններում նշված չա-
փերով), սովխոզների աշխատանքի վորակի բարձրաց-
ման խնդիրները, մանավանդ բերքատվության բարձ-
րացման, նախքի արտադրանքի բարձրացման, կրթ-
նատվության բարձրացման, ինքնարժեքի իջեցման,
աշխատանքի արտադրողականության բարձրացման և
աշխատանքի բոլոր ճյուղերում բոլոր դրժի աշխատու-
թյան անցնելու սկզբունքին, բերքը հավաքելիս կո-
րուստը խիստ կրճատելու, մատուղ անասունը պահ-
պանելու խնդիրները և այլն:

Այս խնդիրների շարքում համազումարը շեշտում
է .

1) Մեքենաներին իրոք խնամքով վերաբերվելու
համար մղվելիք պաշարի անհրաժեշտությունը: Հա-
մադումարը համախոսություն է տալիս ԽՍՀ Միության
Ժողովրդական կոմիսարների Խորհրդի և Կենտրոնական
Գործադիր կոմիտեի 1931 թվի փետրվարի 13-ի վո-
րոչմանը՝ ջրեյակյան պատասխանատվության մասին՝
արակտորներն ու դյուղատնտեսական մեքենաները
կոտրելու և փչացնելու համար ափս դեպքերում, յերբ
այդ բանն առաջանում է հիշյալ գույքին անպիտան վե-
րաբերմունք ցույց տալու հետևանքով:

2) Անհրաժեշտ է սահմանել սովխոզների աշխա-
տանքի մեջ հաշվառը և վերահսկողություն սպրանքա-
յին արտադրանքի արտադրության պլանների իրապես

կատարման ու արտադրանքը սահմանված ժամկետներին պետութայնը հանձնելու գործի վրա:

Արտադրութայնը պլանի լիովին ու ժամանակին կատարելը և ապրանքային արտադրանքը պետութայնը հանձնելու հանգամանքը դառնում են սովխոզների գործնական աշխատանքի վճարական ցուցիչ, վորի հիման վրա խորհրդային իշխանությունը կզնահատի յուրաքանչյուր սովխոզի աշխատավորներին ամբողջ կազմի և մանավանդ գիրենկուդի աշխատանքը:

IV

Առաջադրություններ սովխոզների զարգացման համար

1. Զթուլացող տեմպերով շարունակել խորհրդային տնտեսությունների զարգացումը, այսինքն՝

ա) 1931 թվին ցանքերի տարածությունը խորհրդային տնտեսություններում հասցնել 9,5 միլիոն հեկտարի, այդ թվում՝ «Զերնոտրեստում» — 5 միլիոն հեկտարի, անասնաբուծական տրեստներում — յերկու միլիոն հեկտարի, «Սոյուզասխարում» — 930 հազար հեկտարի, տեխնիկական մշակույթների ապարեզում (բացի ճակնդեղից) — 350 հազար հեկտարի, «Սոյուզսեմենովոդում» — 700 հազար հեկտարի:

բ) 1932 թվին ցանքերի տարածությունը խորհրդային տնտեսություններում հասցնել 14 միլիոն հեկտարի, այդ թվում՝ «Զերնոտրեստում» — 7,2 միլիոն հեկտարի, անասնաբուծական տրեստներում — 4 միլիոն հեկտարի, «Սոյուզասխարում» — մեկ միլիոն հեկտարի, տեխնիկական մշակույթների ապարեզում (բացի ճակնդեղից) — 700 հազար հեկտարի, «Սոյուզսեմենովոդում» — 700 հազար հեկտարի:

գ) 1933 թվին ցանքերի տարածությունը խորհրդային տնտեսություններում հասցրվել է 19 միլ. հեկտարի, այդ թվում՝ «Զերնոտրեստում» — 9,5 միլիոն հեկտարի, անասնաբուծական տրեստներում — վեց միլիոն հեկտարի, «Սոյուզասխարում» — 1.150 հազար

հեկտարի, տեխնիկական մշակույթների ապարեզում (առանց «Սոյուզասխարի») — 1.150 հազար հեկտարի, «Սոյուզսեմենովոդում» — 800 հազար հեկտարի:

2. Ընդունել անասնաբուծական սովխոզների զարգացման պլանը, հասցնելով անասնի քանակը՝

ա) «Սկոտովոդում» 1931 թվին — 2,8 միլիոն գլուխ յեղջյուրավոր անասնի, 1932 թվին — հինգ միլիոն գլխի և 1933 թվին — 7 միլիոն գլխի:

բ) «Սվինովոդում» 1931 թվին — 1,9 միլիոն խոզի, 1932 թվին — 4,5 միլիոն խոզի և 1933 թվին — 6,3 միլիոն խոզի:

գ) «Ուլյեկովոդում» 1931 թվին — 4,4 միլիոն վոշխարի, 1932 թվին — 9 միլիոն վոշխարի և 1933 թվին 18 միլիոն վոշխարի:

դ) Կաթնա-յուղական տրեստներում («Սոյուզասխարի» կաթնատնտեսական ֆերմաների հետ միասին) 1931 թվին — 420 հազար գլխի, 1932 թվին — 900 հազար գլխի և 1933 թվին — 1,5 միլիոն գլխի:

յե) Թռչնաբուծական տրեստում 1931 թվին — 3 միլիոն հատի, 1932 թվին — 10 միլիոն հատի և 1933 թվին — 20 միլիոն հատի:

Անասնաբուծական սովխոզների ծավալման այս ծրագրի իրագրեա իրագործումն ապահովելու համար առանձնապես կարևոր խնդիր համարել արտադրութայն հիմնական պրոցեսների մեքենայացումը անասնաբուծական սովխոզներում, ուստի, պետք է ապահովվի սովխոզների և կոլխոզների և կոլտոգական մեքենաների համար անհրաժեշտ մեքենաների քանակը, մասնավորապես խոտհարքի ու խոտահավաքի համար, դանադան տեսակի կեր պատրաստելու, արմատապտուղներ հավաքելու, ջուր և կեր տալու, երկաթակույթի, կապի մեքենայացման համար և այլն:

3. Վերոշել սովխոզների ապրանքային արտադրանքի հետևյալ չափը.

ա) 1931 թվին — 550-600 միլիոն ռուբլի (1930 թվի գներով), այդ թվում՝ 190-195 միլիոն մուլթ հացահատիկ

սերկներ, 6-6 և կես միլիոն փութ միա, 600-700 հազար փութ յուղ, 230 միլիոն փութ ճակնդեղ, 2-2 ու կես միլիոն փութ բամբակ և 400 հազար փութ բուրդ:

բ) 1932 թվին 1,0-ից մինչև 2,1 միլիարդ ուռլի (1930 թվի գներով), այդ թվում՝ մոտավորապես 290 միլիոն փութ հացահատիկներ, բամբ միլիոն փութ միա, 1,3 միլիոն փութ յուղ, 320 միլիոն փութ ճակնդեղ, 4,5 միլիոն փութ բամբակ և 650 հազար փութ բուրդ:

գ) 1933 թվին 2,0-ից մինչև 2,1 միլիարդ ուռլի (1930 թվի գներով), այդ թվում՝ մոտավորապես 400 միլիոն փութ հացահատիկներ, 45 միլիոն փութ միա, 2,5 միլիոն փութ յուղ, 400 միլիոն փութ ճակնդեղ, 6,5 միլիոն փութ բամբակ և 1,3 միլիոն փութ բուրդ:

Հանձին սովխոզներին—ստեղծվում է աշխարհումս չտեսնված գյուղատնտեսական արտադրութային տիպ: ԽՍՀ Միությանը հանդիսանում է գյուղատնտեսության զարգացման նոր տեղիների փակական զրոշմակիրն ու առաջնորդը վո՛չ միայն այն տեսակետից, վոր կապիտալիստականի փոխարեն ստեղծում է սոցիալիստական խոշոր գյուղատնտեսություն, վորպես արտադրութային բարձրագույն ձև, այլև այն տեսակետից, վոր սովխոզները հանդիսանում են աշխատանքի կազմակերպութային ամենաարտադրավոր ձևը գյուղատնտեսություն մեջ:

Հարվածաշնութային, սոցիալիստական մրցութային մեթոդները (աշխատակիցների միջև սովխոզների ներսում, այս ու այն սովխոզի միջև, տարբեր սխառմի պատկանող սովխոզների միջև, սովխոզների ու կոլխոզների միջև) պետք է ասանան իսկական մասնաշաղկապ կիրառում, վորպեսզի սովխոզների հիման վրա ձևակերպով պրոլետարական նոր կադրերը հիրավի արժանի լինեն այն դործին, վորքի վրա աշխատում են ներսում:

ԽՍՀ Միության խորհուրդների վեցերորդ համագումարը գիմում է կոլխոզական ամբողջ գյուղա-

յիությանը, չքալար-միջակ անհատական բոլոր տղն-տեսություններին:

Սովխոզների դործը ձեր ընդհանուր դործն է: Հառաչադիմության ամեն քայլ սովխոզների զարգացման մեջ բարելավում է բանվորների և գյուղացիների նյութական դրությունը, հեշտացնում է կոլխոզների հետադադարացումը և սմբարիդում և Խորհրդային Միության հզորությունը: Խորհուրդների համագումարը լիահոյս է, վոր ԽՍՀ Միության աշխատավոր մասաները ամբողջ յեռանդով կաջակցեն սովխոզների չինարարությանը և վճռական հակահարված կտան սովխոզների թշնամիներին—կուլակներին, վնասարարներին, բյուրեղատններին, աջ ուկլոնիստներին:

ԽՍՀ Միության խորհուրդների վեցերորդ համագումարի նախագահ՝ Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀ Միության խորհուրդների վեցերորդ համագումարի քարտուղար՝ Ա. ՅԵՆՈՒԿԻՉԵ:

Մոսկվա, 17 մարտի 1931 թ.



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

	Եջ
1. Վերոշում և ՍՀՄ կառավարության հաշվետվության թույլ	3
2. Կոլխոզական շինարարության մասին	10
3. Սովխոզական շինարարության մասին	28



ՀՀ Ազգային գրադարան



29.806

5 407.

u81

800 U

338.1

14-11